

ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ  
ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից շուկայական տնտեսությունում հարկային քաղաքականության կիրառման առանձնահատկությունները գլխավորապես կախված են պետության կողմից ընտրված տնտեսության մոդելի առանձնահատկություններից և տնտեսական հարաբերությունների կարգավորման աստիճանից: Հարկային քաղաքականությունը հիմնված է տվյալ երկրում ձևավորված հարկային համակարգի վրա: Վերջինս իրենից ներկայացնում է հարկերի սահմանման, փոփոխման, դրանց գանձման, նշված գործընթացների վերահսկման հարաբերությունները կանոնակարգող կազմակերպակառուցվածքային համակարգ: Հարկային համակարգերի ձևավորումն իրականացվում է երկու ձևով. ելնելով կոնկրետ երկրի պետական կառավարման տիպից, տնտեսական առանձնահատկություններից, զարգացվածության մակարդակից, քաղաքական ռեժիմից կամ անկախ թվարկված գործոնները հաշվի առնելու: Վերջինս իրենից ներկայացնում է հարկային համակարգի ձևավորման դասական սկզբունքը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարկային համակարգերի կառուցման այս սկզբունքի կիրառման դեպքում հարկային քաղաքականությունն ավելի արդյունավետ է, և աշխարհի զարգացած երկրներում, հիմնականում, գործում է այս սկզբունքը: Բայց դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ յուրաքանչյուր երկրի հարկային համակարգին բնորոշ է որոշակի յուրահատուկ ինքնատիպություն:

Ցանկացած պետություն՝ տնտեսության մակրոկարգավորման շրջանակներում մշակում և իրականացնում է հարկային քաղաքականություն, որի առանձնահատկությունները կախված են տվյալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման տեմպերից, շուկայական տնտեսական հնարավորություններից և մի շարք այլ կարևոր պայմաններից: Հարկային քաղաքականության արդյունավետությունից է կախված պետության գործառնությունների պատշաճ իրականացումը և սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող առանցքային մի շարք խնդիրների լուծումը: Այն հայտ է, որ այդօրինակ արդյունավետ քաղաքականության մշակումը պահանջում է հարկային համակարգի կառուցման գիտականորեն հիմնավորված մոտեցումների կիրառում և միջազգային փորձի բազմակողմանի խորը ուսումնասիրություն ու վերլուծություն:

Ցանկացած երկրի հարկային քաղաքականության մշակումը և իրականացումը պետք է հիմնված լինի այդ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական տեսլականի վրա: Վերջինս իր էական ազդեցությունն է ունենում նաև հարկային համակարգի ձևավորման առանձնահատկությունների վրա: Թեև, ինչպես նշվեց, հարկային համակարգը հանդիսանում է երկրի սոցիալ-տնտեսական ռազմավարության կարևորագույն կողղը, սակայն, տարբեր համակարգերում գործող հարկման եղանակները կարող են միմյանցից որոշակիորեն տարբերվել՝ կախված տվյալ փուլում պետության կողմից լուծման ենթակա խնդիրներից: Մի դեպքում հարկային համակարգերը կարող են հիմնված լինել պետական հարկադրանքի վրա՝ կիրառելով հարկային վարչարարության տարբեր ձևեր, իսկ մյուս դեպքում՝ կամավորության սկզբունքի վրա՝ հիմնվելով տնտեսվարողների և ազգաբնակչության բարձր քաղաքացիական գիտակցության վրա: Բնականաբար, տարբեր հարկային համակարգերում կիրառվում են տարբեր հարկատեսակներ՝ միմյանցից տարբերվող դրույքաչափերով:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարկային համակարգերը, ելնելով դրանց հիմքում դրված սկզբունքներից և հարկման կիրառվող մոտեցումներից, կարելի է դասակարգել երկու հիմնական տիպերի: Առաջինն իր մեջ ներառում է այն հարկային համակարգերը, որոնց բնորոշ են բարձր հարկային դրույքաչափերը, խիստ պատժամիջոցներ նախատեսող օրենսդրական դաշտը, հարկային կոշտ վարչարարությունը և այլն: Նմանատիպ համակարգեր գործում են աշխարհի

երկրների մեծ մասում, ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող: Երկրորդ տիպի հարկային համակարգերին բնորոշ է հարկման առավել ազատական ու մեղմ ռեժիմը: Որպես կանոն, նման համակարգեր գործում են ոչ շատ մեծ թվաքանակ կազմող առանձին երկրներում, որտեղ գործում են շատ ցածր կամ զրոյական հարկում, ինչպես նաև տնտեսական գործունեության, կապիտալի շարժի նկատմամբ թույլ վերահսկողություն:

Անդրադառնալով առաջին տիպին, որը ավելի տարածված է աշխարհում և տնտեսագիտական ուսումնասիրության տեսանկյունից ավելի կարևոր է, պետք է նշել, որ այն, իր հերթին, կարող է դասակարգվել՝ մի շարք չափանիշներից ելնելով: Այդ չափանիշներից կարելի է առանձնացնել, մասնավորապես, ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը: Վերջինս, բնականաբար, տարբերվում է առանձին երկրներում և ցույց է տալիս հարկային բեռի ծանրության աստիճանը՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար: Եթե ուղղակի հարկերի տեսակարար կշիռը մեծ է, ապա դա խոսում է այն մասին, որ պետական հարկային եկամուտները հիմնված են ֆիզիկական անձանցից գանձվող եկամտահարկի և իրավաբանական անձանցից գանձվող շահութահարկի (որոշ դեպքերում, նաև եկամտահարկի) վրա: Հակառակ դեպքում, եթե անուղղակի հարկերի տեսակարար կշիռն է մեծ, ապա, գերակայում են ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման բոլոր փուլերում միջանկյալ և վերջնական սպառման ժամանակ գանձվող անուղղակի հարկերը, որոնց բեռի փաստացի կրողները համարվում են այդ ապրանքների և ծառայությունների սպառողները:

Դասակարգման համար կարևոր մեկ այլ չափանիշ կարելի է դիտարկել հարկային համակարգի կենտրոնացվածության աստիճանը: Վերջինս պայմանավորված է հարկային հարաբերությունների ոլորտում իշխանության տարբեր մակարդակների լիազորությունների և լծակների կենտրոնացվածությամբ: Կենտրոնացված հարկային համակարգի դեպքում հարկային օրենսդրության սահմանման և հարկերի հավաքագրման ոլորտում հիմնական իրավասությունները վերապահվում են տվյալ երկրի կառավարությանը: Ապակենտրոնացված հարկային համակարգին բնորոշ է կենտրոնական իշխանության, հանձինս՝ կառավարության, բավականաչափ սահմանափակ դերը, իսկ տեղական ինքնակառավարման մարմինները էապես ինքնուրույն են պետական կառավարման համակարգից, ինչպես նաև նրանց պատվիրակված են բավականաչափ լայն իրավասություններ՝ այդ թվում, նաև հարկային քաղաքականության իրականացման ոլորտում:

Յուրաքանչյուր կոնկրետ երկրի հարկային համակարգի ապակենտրոնացման աստիճանը մեծապես կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են տնտեսական զարգացման մակարդակը, կառավարման համակարգի բնույթը, պետական քաղաքականության ուղղությունները, երկրի քաղաքական իրավիճակը և այլն: Չարգացող, ինչպես նաև անցումային տնտեսություն ունեցող երկրներում, որոնց թվին է դասվում նաև Հայաստանը, հարկային համակարգերը, հիմնականում, բնորոշվում են պետական իշխանությունից՝ տարածքային իշխանության մարմինների խիստ կախվածությամբ: Սակայն, հարկ է նշել, որ աստիճանաբար, զարգացած երկրներում նկատվում են հարկային համակարգերի ապակենտրոնացման միտումներ, ինչը բխում է տվյալ երկրների տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրներից:

Հարկային համակարգերի կառուցման ժամանակ դրանց հիմքում դրվում են նաև այլ չափանիշներ: Մասնավորապես, հարկային բեռի մակարդակը, հարկերի քանակը և կազմը, հարկման որոշակի ձևերի կամ կարգերի առաջնահերթությունը (հարկային դրույքների պրոգրեսիվ, ռեգրեսիվ, համամասնական բնույթը) և այլն: Սակայն, ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը որպես կարևորագույն ցուցանիշ ամենաճիշտն է բնութագրում տվյալ երկրի հարկային համակարգը: Այս ցուցանիշի միջոցով, ըստ դրանց համամասնությունների առանձնացվում են հարկային համակարգերի չորս հիմնական մոդելներ: Դրանք հետևյալն են.

- անգլոսաքսոնյան մոդել, որը գործում է ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Ավստրալիա և այլ և սկանդինավյան՝ Դանիա, Շվեդիա, Նորվեգիա և այլ երկրներում, և որի հիմքում ընկած է ֆիզիկական անձանց եկամուտների հարկումը: Անուղղակի հարկերի տեսակարար կշիռը այս երկրների պետական եկամուտներում մեծ չէ:
- եվրոկոնտինենտալ կամ եվրոպական մայրցամաքային մոդել, որը գործում է եվրոպական

մայրցամաքային պետություններում, մասնավորապես՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Նիդեռլանդներում, Ավստրիայում, Բելգիայում և այլն: Այս մոդելում ուղղակի հարկերը գերակշռում են, թեև անուղղակի հարկերը ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն, քան մախորդ մոդելում: Այս մոդելին բնորոշ է նաև սոցիալական ապահովագրության մուծումների մեծ տեսակարար կշիռը:

- լատինաամերիկյան մոդելը հիմնականում, հիմնված է անուղղակի հարկման վրա, որը ավելի արդյունավետ է սղաճի բարձր տեմպերի պայմաններում: Բացի այդ, անուղղակի հարկերը ավելի հեշտ են հավաքագրվում և վերահսկվում պետության կողմից: Այս մոդելը գործում է Լատինաամերիկյան տարածաշրջանի (Մեքսիկա, Արգենտինա, Բրազիլիա, Բոլիվիա, Չիլի, Պերու և այլն), Ասիայի տարածաշրջանի մի շարք (Իրան, Իրաք, Պակիստան, Հնդկաստան և այլն), ինչպես նաև Աֆրիկայի որոշ երկրներում:
- խառը մոդելն իր մեջ ներառում է համադրում է վերոթվարկյալ մոդելների բնորոշ մի շարք գծեր: Խառը մոդել ունեցող երկրներին են դասվում նրանք, որոնք չեն կարող միանշանակորեն դասվել այս կամ այն հարկման մոդելին, և որի պայմաններում գործում են ուղղակի և անուղղակի հարկման զարգացած համակարգեր: Մասնավորապես, այսպիսի մոդել է գործում Ճապոնիայում: Ընդհանուր առմամբ, այս երկրում հարկային մուտքերի կառուցվածքը համարյա միևնույնն է, ինչը որ բնորոշ է անգլոսաքսոնյան մոդելի երկրներին, սակայն, ի տարբերություն դրանց, Ճապոնիայում նախապատվությունը տրվում է ոչ թե եկամտահարկին՝ այլ ապահովագրական վճարներին:

Գոյություն ունեն նաև այլ հարկման մոդելներ, որոնք այդքան մեծ տարածում չունեն: Առանձին երկրներ, որոնց մոտ բացակայում է հարկման մեծ պոտենցիալը, գնացել են սովորական հարկերից հրաժարվելու և արտոնյալ հարկային ռեժիմ սահմանելու ճանապարհով: Սա, այսպես կոչված, օֆշորային մոդելն է, որը գործում է Անդորրայում, Մոնակոյում, Պանամայում, Յամայկայում, Կոստա-Ռիկայում, Մալայզիայում, Ֆիլիպիններում, Բերմուդյան և Սեյշելյան կղզիներում և այլ երկրներում:

Ինչ վերաբերում է մեր հանրապետությանը, ապա գործող հարկային համակարգի դիտարկումը և վերլուծությունը թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ ՀՀ հարկային համակարգն իր բնույթով դասվում է առավելապես անուղղակի հարկման վրա հիմնված մոդելին: Անուղղակի հարկերի տեսակարար կշիռը, օրինակ՝ 2011 թվականին կազմել է շուրջ 60.5 տոկոս, որը միջինը մոտ 2 անգամ գերազանցում է Եվրոպական երկրների մոյն ցուցանիշը (Գերմանիայի, Հոլանդիայի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի, Չեխիայի, Իսպանիայի, Բելգիայի և այլն), մոտ 1.5 անգամ Ռուսաստանի մոյն ցուցանիշին և այլն: Նախկինում, մեզ մոտ անուղղակի հարկերի տեսակարար կշիռն ավելի բարձր է եղել. 2000-2008թթ. ընկած ժամանակահատվածում նշված ցուցանիշը միջին հաշվով կազմել են շուրջ 69 տոկոս:

Մասնավորապես, միայն ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի և մաքսատուրքի բաժինը պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում 2009 թվականին կազմել է մոտ 60 տոկոս<sup>1</sup>: Ինչ վերաբերում է հաջորդիվ տարիներին, ապա այդ ցուցանիշը փոքր-ինչ նվազելու միտում է ունեցել, սակայն մնալով բավականին բարձր: Աղյուսակ 1-ում ներկայացվում է 2010-2011 թթ. ՀՀ-ում հարկատեսակների կառուցվածքն՝ ըստ առանձին հարկատեսակների, ինչից երևում է, որ անուղղակի հարկերի տեսակարար կշիռը կազմել է 2010 թվականին՝ 57.43%, իսկ 2011 թվականին այդ ցուցանիշը նորից աճել է կազմելով 60.65%, ինչը մոտ է 2009 թվականի ցուցանիշին:

*Աղյուսակ 1*

**ՀՀ հարկային եկամուտների կառուցվածքն՝ ըստ առանձին հարկատեսակների՝  
2010-2011 թվականների համար<sup>2</sup>**

| Ցուցանիշ | 2010թ. հունվար- | 2011թ. հունվար- |
|----------|-----------------|-----------------|
|----------|-----------------|-----------------|

<sup>1</sup> Taxservice.am

<sup>2</sup> Taxservice.am

|                                                                | դեկտեմբեր | դեկտեմբեր |
|----------------------------------------------------------------|-----------|-----------|
| ԱԱՀ                                                            | 49.90%    | 51.48%    |
| Շահութահարկ                                                    | 13.59%    | 15.53%    |
| Եկամտահարկ                                                     | 12.92%    | 12.89%    |
| Ակցիզային հարկ                                                 | 2.67%     | 3.67%     |
| Ծխախոտի արտ. համար հաստ. վճար                                  | 4.35%     | 3.48%     |
| «Հաստ.վճարի մասին» ՀՀ օրենքով սահմ. գործ.տեսակներից հաստ. վճար | 3.62%     | 3.24%     |
| Մաքսատուրք                                                     | 4.86%     | 5.50%     |
| Այլ հարկային եկամուտներ                                        | 8.09%     | 4.20%     |

Ինչ վերաբերում է 2012 թվականի նույն ցուցանիշին, ապա ներկա պահին տարեկան ամփոփ տվյալների բացակայության պատճառով կներկայացվի վերջին՝ դեկտեմբեր ամսվա տվյալները՝ համեմատելով նախորդ՝ 2011 թվականի նույն ամսվա տվյալների հետ:

## Աղյուսակ 2

### ՀՀ հարկային եկամուտների կառուցվածքն՝ ըստ առանձին հարկատեսակների՝ 2011 - 2012 թվականների դեկտեմբեր ամիսների համար<sup>1</sup>

| Ցուցանիշ                                                         | 2011թ դեկտեմբեր | 2012թ դեկտեմբեր |
|------------------------------------------------------------------|-----------------|-----------------|
| ԱԱՀ                                                              | 51.7%           | 45.3%           |
| Շահութահարկ                                                      | 12.4%           | 18.2%           |
| Եկամտահարկ                                                       | 14.5%           | 13.1%           |
| Ակցիզային հարկ                                                   | 3.1%            | 3.5%            |
| Ծխախոտի արտ. համար հաստ. վճար                                    | 6.9%            | 7.4%            |
| «Հաստ. վճարի մասին» ՀՀ օրենքով սահմ. գործ. տեսակներից հաստ. վճար | 2.7%            | 1.3%            |
| Մաքսատուրք                                                       | 5.3%            | 3.7%            |
| Այլ հարկային եկամուտներ                                          | 3.4%            | 7.4%            |

Աղյուսակից երևում է, որ 2012 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ անուղղակի հարկերի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում կազմել է 52.5 տոկոս՝ 2011 թվականի նույն ժամանակահատվածի 60.1 տոկոսի դիմաց: Թեև այստեղ նկատվում է որոշակի նվազման միտում, սակայն, այնուամենայնիվ այս ցուցանիշը բավականին բարձր է: Միաժամանակ, պետք է նշել նաև, որ երկրի տնտեսական զարգացմանը գույժնեթաց այդ հարաբերակցությունը պետք է փոխվի, ինչի մասին է վկայում նաև աղյուսակի տվյալները:

Հարկ է նշել, որ նշված ժամանակահատվածի սկզբում այս ցուցանիշն ավելի բարձր է եղել, իսկ հետագայում արդեն դրսևորել է անկման միտումներ: Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունի որոշակի օրինաչափություն տվյալ երկրի տնտեսական զարգացման մակարդակի և հարկային եկամուտների կազմում անուղղակի հարկերի տեսակարար կշռի միջև: Մասնավորապես, զարգացած եվրոպական երկրներում հարկային մուտքերի կազմում անուղղակի հարկերի մասնաբաժինը ավելի փոքր է, քան զարգացող երկրներում: Դա ունի իր օբյեկտիվ հիմքերն, այն առումով, որ զարգացող և անցումային տնտեսություն ունեցող պետություններում, որպես կանոն, գրեթե մշտապես առկա է պետական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների սղություն, ինչի լրացման ամենաարագ ձևը՝ անուղղակի հարկերի ավելացումն է: Այդ տեսանկյունից, անուղղակի հարկերի ֆիսկալ նշանակությունն ավելի մեծ է:

Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ Հայաստանի Հանրապետությունում անուղղակի հարկերի տեսակարար կշիռը բավականաչափ բարձր է՝ համեմատած եվրոպական ինչպես զարգացած,

<sup>1</sup> Taxservice.am

այնպես էլ զարգացող երկրների նույն ցուցանիշի հետ: Հաշվի առնելով, որ անուղղակի հարկերի բեռը կրում է վերջնական սպառողը՝ ավելի թանկ վճարելով ապրանքների և ծառայությունների համար, կարծում ենք, հանրապետության սոցիալ-տնտեսական ներկա պայմաններում մեծան քաղաքականությունը տնտեսապես արդարացված չէ: Իրականում, նույնիսկ այն երկրներում, որտեղ հարկերի կազմում անուղղակի հարկերի տեսակարար կշիռը մեծ է, միաժամանակ գործում են այդ հարկատեսակների տարբերակված դրույքաչափեր, ինչը հնարավորություն է տալիս դրանք ավելի արդյունավետ կիրառել՝ հնարավորինս ապահովելով ազգաբնակչության խոցելի խմբերի համար հարկային համեմատաբար ավելի թեթև բեռ:

Ամփոփելով, նշենք, որ, հաշվի առնելով վերը նշված առանձնահատկությունները, մեր հանրապետությունում իրականացվող ներկայիս հարկային քաղաքականությունը պետք է լուրջ փոփոխություններ կրի՝ հնարավորինս ապահովելով պետության ֆինանսական անվտանգության և տնտեսության զարգացման ու աճի միջև արդյունավետ հաշվեկշռվածություն:

**Сукиас Анастасян**

### **Сравнительный анализ опыта РА и зарубежных стран в области налоговой политики**

#### **Аннотация**

Налоговая политика любого государства зависит от особенностей выбранной правительством экономической модели и степени урегулированности экономических отношений. В статье представлены основные типы действующих в мире налоговых систем и их сравнительный анализ, а также особенности проводимой в РА налоговой политики в контексте вышеназванных анализов.

**Suqias Anastasyan**

### **Comparative analysis of international and Armenian practices applied in tax policy**

#### **Abstract**

The tax policy of each nation depends on the peculiarities of the selected model the economy needs to be fitted in and the level of regulation of economic relations. The article presents the main types of tax systems utilized and/or functioning worldwide, provides comparative analysis of these systems and the peculiarities of the implemented tax policy in Armenia in the context of the above-mentioned analysis as well.